ոմանք ասեն 'ի բախտէ. այս ամենայն հաստատեալ կայ 'ի մէջ բնութեան մերոյ, այլ 'ի մէնջ այս անշափելի և փոփոխական բնութեանս ունիմք անշփոթապէս միաւորեցեալ հոգի բանական, որում 'ի Տեառնէ արարչէն փչմամբ ընկալաք, որպիսի և ուստի սկսեաց և որում կերպարանի և որպէս բնակի ընդ մեզ և կատարումն զինչ լինելոց է՝ թողից զի ընթերցուք 'ի սուրբ գրեանց շառաւիղել 'ի սրբոց մերոց։

Այլ որովհետև ժամանակն ամաց կենաց մերոց 'ի ներքոյ արեգական և 'ի վերայ աշխարհի՝ ըստ ասացելոյն մարգարէին, եօթանասուն ամ և 'ի տեսողութեան մերոյ այժմոյս միևնոյն բնութիւնս մեր այնքան փոփոխական է որ ոչ ոք կարէ հաստատել 'ի միտս իւր, թէ զի արդ՝ կացցէ և մնասցէ, զի գոցի բարեպէս վարել զկեանս իւր վասն Օգտութիւն հոգւոյ և մարմնոյ իւրոյ. թէպէտ բերան Տեառն խօսեցաւ վասն բնութեան մարդւոյ 'ի վերայ երկրի՝ այսինքն գանձեցէք զգանձս ձեզ յերկինս ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ, այլ նաև ասաց 'ի մէջ առակին քանքարոյ պահին՝ թէ որ 'ի փոքուն հաւատարիմ է՝ բազմիցս ևս հաւատարիմ գոլ կարէ, նա ևս թէ՝ որդիք աշխարհիս իմաստնագոյն են քանթէ որդիս լուսոյ, որ բանս այս եղև 'ի վերայ առն հնարագիտի անտեսին, նաև Էկլէզիաստիկն գրէ ասելով՝ թէ ունայնութիւն ունայնութեանց ամե-